

Արեւմտեան Հայաստանի պաշտպանութեան խնդիրները
ԱՄՆի եւ Դաշնակից տէրութիւնների քաղաքականութեան
ուրրտում (1917-1918 թթ.)

Մուտք

Լայնածաւալ պատերազմի, առաւել ևս՝ աշխարհամարտի եւ յեղափոխութեան միածալունը, ամենաբարդ ու կորստաբեր իրադրութիւն է ստեղծում ցանկացած պետութեան ու ժողովրդի համար, մանավանդ, երբ նրանք մարտչուն են միջազգային բազմակողմանի յարաբերութիւնների խաչաձեւուող համապատկերում: Ստորեւ լուսաբանուում նման վիճակում յայտնուած հայ ժողովրդի քաղաքական պատուածքը:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից (1917թ. Նոյեմբերի 7/Հոկտեմբերի 25) յետոյ նոր բոլշեւիկեան իշխանութիւնն առաջ քաշեց ռուսական պետութիւնը՝ Առաջին Աշխարհամարտից դուրս բերելու քաղաքականութիւնը, մինչդեռ Կովկասեան Ռազմաճակատում ռուսական բանակը նշանաւոր յաղթանակներ էր ձեռք բերել՝ վայելելով տեղի հայ ազգաբնակչութեան ջերմ օժանդակութիւնը: Զօրքը 170 կմ առաջ էր անցել 1914ի սահմանից, հասել Մուշ ու Դատվան՝ իր նուաճած վայրերում կազմակերպելով սեփական վարչակարգ:

Հոկտեմբերեան Յեղափոխութեան առաջնորդները, սակայն, հետամուտ էին անյապաղ հաշտութիւն կնքել թշնամու հետ, իսկ վերջինս՝ ի դէմս Գերմանիայի, պահանջում էր վերադարձնել պատերազմի ընթացքում Օսմանեան Կայսրութիւնից գրաւուած բոլոր տարածքները:

1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ Անդրկովկասը ենթարկուում էր ժամանակաւոր Կառավարութեանը, իսկ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ բոլշեւիկների // -273 իշխանութիւնը՝ նաւթագործ Բաքուի շրջանից բացի, չունեցաւ վարչութիւն, ղեկավարում. կազմակերպութիւնները առաջուայ նման ենթարկուում էին Ռուսաստանի բուրժուական, ժողովրդավարական մարմիններին: Այդուհանդերձ, Կովկասեան Ռազմաճակատի հրամանատարութիւնը կատարեց բոլշեւիկների պահանջը. 1917 Դեկտեմբերի 18ին (5ին) Երզնկայում օսմանեան բանակի հետ կնքուեց զինադադար:

Հարկ է նշել, որ ռուսական զօրքերը քիչ թէ շատ կայուն վիճակ էին պահպանում 1917 Փետրուարից յետոյ: Սակայն բոլշեւիկների «Խաղաղութեան Մասին» հռչակագիրը (Նոյեմբերի 8) խթանեց զինուորների 965 կլմ. ձգուող դիրքերի զանգուածային դասալքութիւնն ու 250,000 հոգուց բաղկացած բանակային կառոյցի քայքայումը¹: Իրավիճակը յղի էր լայնածաւալ թուրքական առաջխաղացմանը, որը կործանման եզրին կը դներ ոչ միային արեւմտահայ, այլեւ հայ ամբողջ ժողովուրդն անխտիր:

Մ. Նահանգների կեցուածքը՝ Փետրուարեան Յեղափոխութեան ու Կովկասեան ճակատի թուլացման հանդէպ. բանակցութիւններ՝ արեւմտահայ զօրաբաժնի մասին

Քառեակ Դաշինքի եւ Անտանտի, միապետական, բուրժուական ու բոլշեւիկեան Ռուսաստանի շահերի բախման այդ բարդ հանգոյցում առկա էր աչքի չզարնող, սակայն արտաքին քաղաքականութեան ոլորտում կարելոր դեր ունեցող եւս երկու պետութիւնների՝ ԱՄՆի եւ Պարսկաստանի գործօնը: 1917 Ապրիլին անգամ ԱՄՆի՝ Յամաշխարհային Պատերազմին միանալուց առաջ պետքարտուղար Ռ.Լանսինգը Կ.Պոլսու ԱՄՆ դեսպանատնից հեռագրեր էր ստանում՝ ռուսական բանակում քայքայիչ գործընթացներով ոգելորած օսմանեան իշխանութիւնների ուրախութեան եւ յաջողութեան ակնկալիքների մասին: Պետրոգրադի Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ Բարձր Դռան ղեկավարները վստահ էին Ռուսաստանի՝ Քառեակ դաշինքի հետ անջատ պայմանագիր ստորագրելու հարցում²: Իսկ Քառեակ դաշինքը Ռուսաստանից պահանջում էր վերադարձնել Արեւմտեան Յայաստանի ազատագրուած նահանգները նախկին բռնակալներին³: Որպէս արձագանք՝ նոյն թուականի Մայիսի 22ին ԱՄՆ նախագահ Ուուրոօ Ուիլսոնը // -274 դիմեց ռուսական ժամանակաւոր Կառավարութեանը եւ շեշտեց, որ ոչ մի ժողովրդի չեն ստիպի ենթարկուել իրեն անընդունելի տիրակալութեանը⁴:

Ուիլսոնի դիմումի տրամաբանութեամբ 1917 Մայիսի 29ին Թիֆլիսում⁵ ԱՄՆ հիւպատոս Ֆ.Ու.Սմիթը իր նստավայրում առաջին հանդիպումն է ունեցել զօրավար Անդրանիկ Օզանեանի հետ: Նրանք զրուցել են արեւմտահայ զօրքեր ստեղծելու մասին⁶: Քննարկումներին ներկայ են եղել խարբերոցի ուսուցիչ Լեւոն Լիւլէճեանն ու թարգմանչի դեր կատարող Վահան Թոթովենցը: Հիւպատոսը առաջարկել է ֆինանսաւորել արեւմտահայ կազմաւորուելիք դիւիզիան՝ դրա գործողութիւնները վերահսկելու պայմանով⁷: Ֆ.Սմիթը ցանկանում էր օգտագործել նոյն օրերին Ծերակոյտում հաստատուած ռուսական 100-միլիոնանոց վարկի մի մասը⁸:

Յունիսի 2ին Զօր.Անդրանիկը հիւպատոսին յանձնեց անհրաժեշտ բացատրագիրը⁹ եւ մարտական գործարական քարտէզը¹⁰: Թիֆլիսում սկիզբ արած դիւանագիտական այդ նախաձեռնութիւնը համընկաւ Մոսկուի տակ՝ Անտանտին օժանդակող¹¹ ու Եւրոպայի Արեւմտեան ճակատում, ժամանակաւոր Կառավարութեան լայնածաւալ յարձակման նախապատրաստման աշխատանքներին: Այնուհետեւ, Պետրոգրադում ԱՄՆ դեսպան Դէյվիդ Ռ.Ֆրենսիսը Թիֆլիսից իր մօտ ժամանած Ֆ.Ու.Սմիթի վերոնշեալ փաստաթղթերը յանձնեց Ռազմական ու Ծովային նախարար Ալեքսանդր Կերենսկուն, իսկ պատճէններն ուղարկեց Ուաշինգտոն ու Եւրոպական մի շարք մայրաքաղաքներ: Միւս կողմից, Փարիզի Հայկական Ազգային Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարը մի յուշագիր պատրաստեց պետքարտուղար Ռ.Լանսինգի հա-

մար, որը 1917 Յունիսի 13ին հասաւ հասցեատիրոջը¹²:

Յուշագրի համաձայն.-

1) Հայաստանի կազմում ընդգրկուելու էին օսմանեան վեց նահանգները, Կիլիկիան եւ Տրապիզոնը

2) Այն ստանալու էր ինքնավարութիւն եւ լինելու էր Դաշնակիցների համատեղ հովանաւորութեան ներքոյ:

3) Հիմք ընդունելով ամերիկեան տեսակէտը Ազգերի Լիգայի եւ մանդատների նկատմամբ՝ նոր խնամակալութիւնը աշխարհի բոլոր երկրների ձեռներէցներին տրամադրելու էր հաւասար //-275 իրաւունքներ իր հսկողութեան տակ գտնուող ինքնավար նոր միաւորման տնտեսութեան, առեւտրի եւ կրթութեան ոլորտներում, ինչպէս նաեւ Բաղդադի երկաթգծով ազատ տեղաշարժի իրաւունք դէպի Պարսկաստան ու Հնդկաստան:

4) Տասնհինգամեայ մանդատի ընթացքում ռեւէ մէկ տէրութիւն պէտք է գործընկերներից վարկ ստանար ու փոխհատուցման հիմնադրամ ստեղծէր՝ օժանդակելով հատուցել Օսմանեան Կայսրութիւնում կազմակերպուած կոտորածների ու տեղահանման զոհերի կրած վնասները:

5) Հոգատար պետութիւնը կարող էր զօրքեր դասաւորել տեղում, իսկ նշուած 15 տարիների ընթացքում նրա բանակը աստիճանաբար պէտք է փոխարինուէր ձեւաւորուող հայկական զինուած ոստիկանութեամբ:

Պօղոս Նուպարի յուշագիրը անդրադառնում էր 1915-1917ի ընթացքում հայ ժողովրդի կրած սարսափելի կորուստներին: Նա նաեւ յիշեցնում էր, որ երբ 1832ին Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը ստեղծում էին օսմանցիներից անկախ Հունաստանի թագաւորութիւնը, այնտեղ բնակոււմ էր ընդամենը 400,000 յոյն: Յուշագիրը վերջում խոստանում էր, որ խնամակալութեան ներքոյ գտնուող Հայաստանը բախարգելման գօտի կը հանդիսանայ Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջագետքի եւ Սիրիայի միջեւ¹³:

Հայերի Ինքնավարութիւնը Օսմանեան Կայսրութեան Կազմում

Վերոյիշեալ յուշագիրը, սակայն, անպատասխան մնաց, իսկ արեւմտահայ զօրաբաժին ձեւաւորելու խնդիրը սառեցուեց մինչեւ 1917 Օգոստոս 3-ը: Այդ ժամանակահատուածում ռուսական բանակը անյաջող առաջխաղացումներ առձանագրեց Երոպայում եւ Մերձաւոր Արեւելքում (Պարսկաստանի եւ Իրաքի մէջ): 1917 Օգոստոս 3ին ԱՄՆ պետքարտուղարը ծանօթացաւ Անտանտի՝ Հայաստանն ազդեցութեան ոլորտների բաժանելու ծրագրին: Նա տեղեկացաւ, որ Արեւմտեան Երոպայի տէրութիւններն այլեւս չէին սատարում հայերին՝ օսմանեան գերիշխանութիւնից ազատելու գաղափարին: Այժմ նրանք գերադասում էին հայերի ինքնավարութիւն՝ Օսմանեան Կայսրութեան կազմում, այն էլ առանց արտաքին հսկողութեան¹⁴: Ինչ վերաբերում էր //-276 եւրոպացիների սպասուելիք ռազմական աւարի բաժիններին, ապա

դրանք մնում էին անփոփոխ:

Այս նոր իրավիճակին ի պատասխան՝ Արտերկրեայ Առաքելութիւնների Լիազօրների Ամերիկեան Վարչութեան աշխատակից, ակադեմիկոս քարոզիչ Է.Եարրովն հիւպատոս Ֆ.Ու.Սմիթի ներկայութեամբ Օգոստոսին Անդրանիկին ծանօթացրեց բրիտանացի գորավար Օ.Շորի և վերջինիս ուղեկից Ջ.Գրեյսի հետ¹⁵: Քառեակը քննեց 8 գնդից բաղկացած 10-20,000անոց հայկական զինուժ հաւաքելու հարցը՝ այն ֆինանսաւորելու եւ 150 բրիտանացի խորհրդականներ տրամադրելու պայմանով: Հայոց Ազգային Խորհուրդը նոյնպէս փորձեց կապ հաստատել եւրոպացիների հետ, սակայն նրա՝ Ֆ.Ու.Սմիթի հետ բանակցութիւնների մասին վկայութիւնները բացակայում են: Իսկ ԱՄՆի Պետքարտուղարութեան ղեկավարը 1917 Օգոստոսի 22ին ստացաւ նոր մանրամասներ Հայաստանին վերաբերող Սայքս-Պիկոյի 1916ի համաձայնագրի մասին¹⁶: (Այսպիսով, Փարիզի Հաշտութեան յետպատերազմեան Համաժողովում նախագահ Ու.Ուիլսոնի պատճառաբանութիւնները՝ Արեւելեան Հարցից անտեղեակ լինելու մասին, իրականութեանը չեն համապատասխանում. 1917 Օգոստոսի դրութեամբ ամերիկեան կողմը քաջատեղեակ էր հայոց խնդրի վերաբերեալ հիմնական տուեալներին):

Ազգային Ինքնապաշտպանութեան Կենսական Պահանջը՝ Յոկտեմբերեան Յեղափոխութիւնից Յետոյ

Հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան շուրջ ընթացող բանակցութիւնների երրորդ՝ վճռորոշ փուլը սկսուեց Յոկտեմբերեան Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ: Դեռեւս այս զինուած ելոյթից առաջ՝ 1917 Հոկտեմբերի 30ին (նոր տոմարով), Ռ.Լանսինգը տեղեկացաւ, որ Միջազգետքում օսմանական բանակը, դեմառդէմ մնալով բրիտանացիների հետ, այնուամենայնիւ, պատրաստուում է լայնածաւալ հարձակման ու չի կամենում առանց կռուի յանձնել այդ ռազմաճակատը: Գիշտ է, որ թուրք ուժերը դրանով շեղուում էին Կովկասեան ռազմաճակատում նախայարձակ քայլերից, սակայն Գերմանիան մեծ եռանդով ու յաջողութեամբ վարում էր իր եւրոպական մարտերը Ռուսաստանի դէմ: Հատկապէս այդ վերջին // -277 գործողութիւնների ճնշման ու գերման քաղաքական պատանջներին շնորհիւ, Օսմանեան Կայսրութիւնը իրօք որ փրկվեց Ռուսաստանից¹⁷:

1917 Նոյեմբերի 3ին, Պետքարտուղարութեան ղեկավարը ստացաւ Պոզոս Նուպարի նոր դիմումը: Նուպարը հաղորդում էր, թէ «Հայկական հարցը այժմ դասուեց միջազգային այն հարցերի շարքին, որոնք վճռելու է հաշտութեան ապագայ վեհաժողովը: [Իսկ պետական անձանց այսպիսի մեծ հաւաքում] Միացեան Նահանգների կառավարութիւնը ունենալու է վճռորոշ ազդեցութիւն¹⁸»: Նույն դիմումով Նուպարը խնդրել էր Ռ.Լանսինգին՝ ճանաչել Գարեգին Փաստրնաճեանին ու Միհրան Սվազլեանին՝ որպէս ԱՄՆի կառավարութեանը կից հաւատարմագրուած Հայ Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչներ:

Նոյն ամսուայ վերջին, դիմումին տրուեց հաշուենկատ մի պատասխան. Պետքարտուղարութիւնը «հաստատեց այն նամակի ստացումը, որտեղ դուք յայտարարութիւն եք արել, թէ անհրաժեշտ էք համարում ներկայացուած լինել Ուաշինգտընում¹⁹»:

1917 Նոյեմբերի 7ին Ռ.Լանսինգը ստացաւ Պետրոգրադի վրայով ուղարկուած Ֆ.Ու.Սմիթի զեկուցագիրը: Վերջինս տեղեկացնում էր քրդերի հետ Վանում բանակցելու եւ համաձայնութեան գալու հնարաւորութեան մասին: Նա մանրամասնում էր որ նախնական քննարկման ընթացքում քրդերը պահանջել են քաղաքական անկախութիւն ճիշտ այն պայմաններով, որոնք առաջարկուել էին արաբներին: Հայկական կողմը սատարում եւ իրագործելի էր համարում այդ նախագիծը²⁰: Ըստ հիւպատոսի զեկուցման՝ քրդերի ռազմական միջամտութիւնն Անտանտին ապահովում էր մեծ առաւելութիւններ. այն իրականանալի էր աննշան ծախսով եւ հնարաւոր էր կազմակերպել Թիֆլիսից: Դաշնակիցներին մնում էր կայացնել քաղաքական որոշում եւ հրամաններ արձակել:

Նոր իրավիճակը գնահատելու համար Լոնդոնում իսկոյն գումարուեց բազմամարդ համաժողով՝ ԱՄՆի ուժեղ պատուիրակութեան մասնակցութեամբ: Համաժողովի աւարտին Թիֆլիսում ԱՄՆ հիւպատոսը ստացաւ մի պատասխան, թէ քրդական ռազմուժին վերաբերող նախագիծը «հետաքրքիր» էր, սակայն Ուաշինգտընը ի վիճակի չէր դրան աջակցել, այսինքն՝ յատկացնել իրենից պահանջուած դրամական միջոցները²¹: Այնուամենայնիւ, Նոյեմբերի 30ին պետական քարտուղարը // -278 պատուիրեց իր մօտ՝ Պետդեպարտամենտ ուղարկել Պետրոգրադի բոլշեւիկեան թերթերում հրապարակուած Եւրոպական 1915-1917ի բոլոր գաղտնի համաձայնագրերը՝ նրանց հիմնադրոյթների մանրամասն շարադրանքով²²:

Արեւմտահայ Դիւիզիայի Կազմաւորման Խնդիրը Հայոց Ազգային Խորհրդի Զննարկումներում

Սիւնոյն ժամանակ, Նոյեմբերի 21ին (8ին) Թիֆլիսում Հայոց Ազգային Խորհրդի (ՀԱԽ) նիստում Սիքայէլ Պապաջանեանը արեց իր առաջին զեկոյցը: Նա պատմեց փոխգնդապետ Արսենի Թորգոմի՝ երեք ամսում 12-16,000անոց արեւմտահայ հետեւակի զօրաբաժին կազմելու առաջարկի մասին: Դիւիզիան նույն Ա.Թորգոմի և Անդրանիկի դեկավարութեամբ պէտք է «օգնութեան գնար Անգլիացիներին²³» Միջագետքում: Փոխգնդապետի տեղեկութիւններով՝ Անտանտի երկրները մտադիր էին տրամադրել խորհրդականներ եւ հանդերձանք, իսկ ընդհանուր ծախսերը հոգալու էր ռուսական ժամանակաւոր Կառավարութիւնը: Ա.Թորգոմը պատրաստ էր անցնել արտասահման եւ ՀԱԽի կարգադրութեաբ շարունակել բանակցութիւնները Եւրոպայում²⁴: Նոյեմբերի 30ին նա անձամբ՝ Արեւմտահայ Խորհրդի անդամների հետ միասին, ներկայացաւ ՀԱԽի նիստ, որտեղ յստակեցրեց, որ 10-15,000 հոգուց բաղկացած արեւմտահայ դիւիզիան ընդգրկուելու էր միասնական Հա-

յկական զօրաբանակի կազմ եւ պաշտպանելու էր Կովկասեան Ռազմա-
ճակատի դիրքերը Արեւմտեան Հայաստանում: Ռուսական բանակի
հրամանատարութիւնը, Արեւմտեան Հայաստանի զօրավար-կոմիսար
Պետր Աւերեանովն ու Թովմաս Նազարբեկեանը դէն չէին այդ զօրա-
մասի ձեւաւորմանը:

Դաշնակիցներն իրենց օգնութիւնն էին առաջարկում նաեւ այդ
ծրագրի կատարման համար, իսկ բրիտանացիների՝ Միջագետքում
ձեռք բերած նուաճումները շեղում էին թուրքական բանակի առաջխա-
ղացման հիմնական ուղին: Այնինչ ասկեարների համար միեւնոյն էր՝
արեւմտահայ թէ արեւելահայ բնակչութեանը ոչնչացնել: Ա.Թորգոմը
զգուշացրեց, որ ինքնապաշտպանութեան գործին մեծագոյն եռանդ է
հարկաւոր, այլապէս Հայաստանի արեւելեան մասն էլ գերծ չի մնայ
թշնամու հարուածներից²⁵: 1917 Դեկտեմբերի 12ին (Նոյեմբերի 29ին)
զօրավարներ Թ.Նազարբեկեանն //-279 ու Միքայէլ Արեշեանը անձամբ
սատարեցին քննարկուող նախաձեռնութիւնը: Նրանց առաջարկեցին
հաւաքագրել թուրքահայ և պարսկահայ կամաւորականներին առան-
ձին, կանոնաւոր գնդերում²⁶:

Յաջորդ իսկ օրը ՀԱԽի անդամներն ունկնդրեցին Պօղոս Նուպարի՝
դիւանագիտական ուղիներով առաքուած հեռագիրը: Վերջինս հայցում
էր որ ՀԱԽը համաձայնութիւն տայ քննարկումների շարունակմանը²⁷:
Միեւնոյն ժամանակ Ֆ.Ու.Սմիթն առաջարկեց իր կառավարութեանը 1
միլիոն դոլար տրամադրել հայկական զօրամասերը համազգեստով
ապահովելու համար, իսկ ԱՄՆ դեսպան Ու.Պեյջը տեղեկացրեց իր
կառավարութեանը Լոնդոնից, թէ Անտանտի անդամները պատրաստ են
մասնակցել այդ գործի ֆինանսաւորմանը:

Պարսկական Դիմումը Մ. Նահանգներին. Անտանտի Տերութիւննե-
րի Գործունէութիւնը

Դեկտեմբերի 17ին (4ին) միանգամայն անսպասելի, քաղաքական
ընթացող զարգացումներին մասնակցելու հայտ ներկայացրին Պարս-
կաստանի իշխանութիւնները: Նրանք հայցում էին ԱՄՆի աջակցու-
թիւնը՝ յետպատերազմեան Հաշտութեան Համաժողովին մասնակցելու,
եւ իրեն սահմաններում կռուող բոլոր ուժերը (Ռուսաստան, Բրիտանիա
եւ Թուրքիա) իրենց երկրից հեռացնելու հարցում: Թեհրանը Միացեալ
Նահանգների պետքարտուղարին յիշեցնում էր Պարսկաստանի չէզո-
քութիւնը: Այնինչ այդ երեք բանակների տեղաշարժերն ու կռիւները մեծ
վնաս էին հասցնում բնակչութեանը: Ի փոխհատուցում ԱՄՆի աջակցու-
թեան՝ պարսկական դահլիճը խոստանում էր վերանայել 1828ի Թուրք-
մենչայի Պայմանագիրը, ինչպէս նաեւ չեղեալ յայտարարել վերջին
ժամանակահատուածում իրեն պարտադրուած բոլոր համաձայնա-
գրերը²⁸: Այսպիսով, շահը ԱՄՆին հրաւիրեց իր երկրում փոխարինելու
Ռուսաստանին եւ Բրիտանիային:

Եւ իրօք, 1918ի ամռանը Պարսկաստանում չեղեալ յայտարարուեց
Թուրքմենչայի Պայմանագիրը, եւ Միացեալ Նահանգներին մատուցե-

ցին մինչեւ այդ Ռուսաստանին պատկանող բոլոր օտարագրերը (concessions)²⁹: Սակայն Թուրքմենչայից հրաժարուելու վճիռը առնչուում էր ոչ միայն //-280 Ռուսաստանին. այն շոշափում էր Հայաստանի կենսական նշանակութիւն ունեցող շահերը եւ վնաս հասցնում Եւրոպայի եւս եօթ երկրների, յատկապէս Բրիտանիայի տնտեսական հնարաւորութիւններին: Արդէն եւրոպական բոլոր համաձայնագրերը հիմք էին ընդունում վերոնշեալ պայմանագրի մօտեցումներն ու սկզբունքները: Մասնաւորապէս, նրանք բոլորը ամրագրեցին արտերկրայնութեան (exterritorial) իրաւունքը, երբ խօսքը քաղաքացիական դատավարութեան մասին էր: Քրեական գործերի պարագայում օտարերկրացին կանգնում էր տեղական դատարանի առաջ:

1917 Ղեկտեմբերի 26ին պետքարտուղար Ռ.Լանսինգը նոր գեկուցագիր ստացաւ եւրոպական գաղտնի համաձայնագրերի եւ Արեւմտեան Հայաստանում ռուսական ազդեցութեան գօտու չափերի մասին: Ըստ տեղեկացման՝ բոլշեւիկների՝ Վանից, Բիթլիսից եւ Էրզրումից հրաժարուելուց յետոյ Անտանտի առաջնորդները Փարիզի հայ պատուիրակութեանը պաշտօնապէս հաւաստիացրել են նրանց երկիրը թուրքական լծից մօտ ժամանակներում ազատելու եւ Դաշնակիցների խնամակալութեան ներքոյ ինքնավար պետութիւն հիմնադրելու մասին: Պետքարտուղարութեան ղեկավարը անմիջապէս պատասխանեց, որ ԱՄՆը միանում է Գերագոյն Ռազմական Խորհրդի աշխատանքներին: Եւ յաջորդ իսկ օրը՝ Ղեկտեմբերի 27ին, նա ստացաւ գաղտնի համաձայնագրերի ամբողջական բնագրերը³⁰:

Արեւմտահայ Դիւիզիայի Խնդրի Վերադարձը Հայոց Ազգային Խորհուրդ

Նոր տոմարով ղեկտեմբերի 28ին առաւելապէս Արեւելեան Հայաստանի դրութեամբ զբաղուած Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) Ազգային Խորհուրդը նորից անդրադարձաւ Անտանտի եւ արեւմուտքում ազատագրուած տարածքների խնդրիներին: Անդրանիկը գեկուցեց ՀԱԽի անդամներին գործի էութիւնը: Նրա պատմածից հետեւում էր, որ ՀՀԴ Բիւրօն փորձեց իր կուսակցութեանը վերագրել համազգային ատեանի որոշումը: Սակայն Անդրանիկը շեշտադրում էր ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ արեւելահայ մարմինների կարեւորութիւնը: Ըստ նրա՝ ռուսական բանակի եւ արտաքին աշխարհի հետ պէտք է գործ //-281 ունենան համազգային կազմակերպութիւնները, եւ յատկապէս նրանց համատեղ որոշումներին է ենթարկուելու նրա ղեկավարած զօրքը³¹:

Արամ Մանուկեանը յաւելեց, որ ինքը՝ որպէս ՀԱԽի առաջնորդներից մէկը, պատկերացնում էր արդիական կանոնաւոր բանակային միաւորումը ռուսական գլխավոր-կոմիսարութեան ենթակայութեամբ: Յատկապէս այդ կոմիսարութեանն Արամը անուանում էր Հայաստանի կառավարութիւն, իսկ երկու Խորհուրդները՝ նրանց ընտրուած 8-հոգանոց համատեղ մարմնի, Հայ Զինուորական Միութեան, կուսակցութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների միջոցով, պէտք է

նպաստելին ընդհանուր գործի յաջողութեանը: Անդրանիկը միանգամայն գոհացաւ նման մօտեցմամբ³²:

Անդրանիկը շեշտադրեց նաեւ, թէ որքան նպաստաւոր էր Կովկասի անվտանգութեան համար Բաղդադում եւ Երուսաղէմում հաստատուած բարեկամական հսկողութիւնը: Այլ խօսքով, Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ներկայ իրավիճակից բխող միջոցառումները շահաւէտ էին հայ, յատկապէս արեւմտեան հատուածի ժողովրդի համար: Ռուսական բանակը վաղուց սերտօրէն կապուած էր ու ձեռք էր մեկնում Դաշնակիցների միացեալ սպայակոյտին, եւ ոչ մի կարիք չկար թոյլ տալ թշնամուն մօտենալ Անդրկովկասի շէնին: Ընդգծելով Թ. Նազարբեկեանի Հայկական Զօրաբանակին ենթակայ լինելու հանգամանքը՝ Անդրանիկը պահանջեց, որ երկու Խորհուրդների միացեալ մարմինը սահմանափակուէր տնտեսական հարցերով եւ օտարների կատարած ծախսերի հսկողութեամբ, իսկ ռազմական գործողութիւնները թելադրում են միանձնեայ ղեկավարութիւն, մասնագիտական հմտութիւն ու ռազմական կրթութեամբ եւ փորձառութեամբ օժտուած սպաների ներդրում³³:

Այս բոլոր քննարկումների համապատկերում Դեկտեմբերի 29ին ԱՄՆ դեսպան Ու.Պէյքը Ռ.Լանսինգին փոխանցեց եւրոպական խաղակիցների մէկ յուշագիր: Նրա գրութիւնը արեւմտահայ զօրքերի կազմաւորման համար շտապ կարգով գումար յատկացնելու եւ այդ զինուժին սպա խորհրդականներ տրամադրելու անհրաժեշտութեան էր վերաբերվում: Վաւերագրի հեղինակները պնդում էին, որ թուրքական ընդարձակունը Անդրկովկասում շատ անելի վտանգաւոր է, քան գերմանական //282 փողով իրականացուած Բաղդադի երկաթուղու կառուցումը³⁴: Այնինչ, յատկապէս Բաղդադի երկաթգծի շուրջ ծաւալուած բախումը դասել էր այս տարածաշրջանում պատերազմի գլխաւոր պատճառներին:

1918ի ճիշտ Ամանորին թիֆլիսեան բանավէճը շարունակուեց, եւ ՀԱԽում ընթերցեցին Արեւմտահայ Կօնֆերանսի (Ուժեղացրած ժողովի) որոշումը, որը Երկրապահ Զօրաբաժնի մասին էր: Այդ խոշոր ստորաբաժանման մաս կարող էին կազմել եզիդները, ասորիներն եւ բոլոր բարեկամ խաղաղատենչ ժողովուրդների ներկայացուցիչները: Կօնֆերանսը յայտարարեց ընդհանուր զօրակոչ, զօրամասն պէտք է ենթարկուէր Հայկական Զօրաբանակին, իսկ քաղաքական բնոյթի հարցերը յանձնում էին գլխաւոր-կոմիսարութեանն ու երկու Խորհուրդները ներկայացնող, 16 հոգուց բաղկացած յանձնաժողովին: Զօրաբաժնի հրամանատար առաջարկուեց Անդրանիկ Օզանյանը³⁵:

Սակայն ՀԱԽի անդամներն ունէին երկու առարկութիւն: Սամսոն Յարութիւնեանը վիճում էր Վահան Փափագեանի հետ, թէ Արեւմտահայ Խորհուրդը չպէտք է ընդհանուր գործին մասնակցի որպէս հաւասարազօր կողմ, իսկ Արամայիս Երզնկեանը խօսք բացեց Անդրկովկասեան կոմիսարիատին ենթարկուելու եւ 1914ի սահմանին ետ քաշուելու մասին, որպէսզի թուրքերն ու տեղի թաթարները չգրգռուէին:

Միւս կողմից, մերժելով Յակոբ Զաւրեանի (Զաւրիեւի) տեսակէտը՝

Ստեփան Մամիկոնեանն ու Ռուբէն Տէր-Մինասեանը արեւմտահայ համահավաք զօրաբաժնի ու նրա հրամանատարի դէմ ելոյթներ ունեցան: Նրանք ճգնում էին այս ծրագրի ղեկավարներին զրկել ինքնուրոյնութիւնից եւ Անտանտից շեղել դէպի Անդրկովկասեան Կոմիսարիատը: Շեշտադրում էին սեփական խորհրդի կարեւորութիւնն ու կուսակցական գործօնը: Թէեւ, հաշուի առնելով Վրաստանի եւ Ադրբեջանի քաղաքական առաջնութիւնները՝ երկրամասի միասնութեան քարոզն ու նրա հետ յոյսեր կապելը նշանակում էին գարմանա-թուրքական միութեանը հնազանդուելու համաձայնողական վարքագիծ:

Իր հերթին, Անդրանիկը յիշեցրեց, ինչպէս ընդամենը 3 օր առաջ Ռ. Տէր-Մինասեանը չէր առարկում դիւիզիայի հարցում, ու հենց նրան առաջարկեց դառնալ այդ զինուժի պետը: Զօրավար-կոմիսարի օգնական Զ.Զաւրեանը արդէն իսկ ստորագրեց ԶԱԽԻ //-283 անդամներին կարդացած ու նրանց հաւանութեանն արժանացած հրամանը: Իհարկէ, օգնականն դա ինքնագլուխ չարեց, քանի որ ռուսական հրամանատարութիւնը Անդրանիկին առաջարկեց գնդապետեր, զէնք ու հագուստ տալ:

Սակայն ԶԱԽԻ կազմակերպչական աշխատանքը աչքի չէր ընկնում նուաճումներով. զինծառայութեան համար բազմաթիւ պիտանի մարդկանցով հանդերձ, Հայկական զօրաբանակում կար ընդամենը 9,000 մարտիկ: Այնինչ Էրզրումում, օրինակ, մնաց 600 անտէր արդիական թնդանօթ, իսկ հակառակորդն հայերի չափ ուժասպառ էր ու տկար: Զօրավարի սրտից արյուն էր գնում³⁶:

Մինչդէռ Արեւելահայ խորհուրդը չէր հաստատում արեւմտահայ պաշտօնակիցների միաձայն որոշումը եւ մտադիր էր կազմել զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր միայն: Վերջնական վճիռը յետաձգուեց մինչեւ 1918 Յունուարի 2ը (1917 Դեկտեմբերի 20): Այդ իսկ օրը Խաչատուր Կարճիկեանը մեկուսացրեց ԶԱԽԻ զօրավար-կոմիսարութիւնից³⁷: Ի տարբերութիւն նրան՝ Անդրանիկը յստակօրէն բաժանեց կազմակերպչական գործառոյթներն ու պնդեց, որ ռազմական դիրքերում գտնուելիս նրա ստորաբաժանումն ենթարկուելու է Թ. Նազարբեկեանին, ուրեմն նաեւ՝ նրան հակադարձող թիֆլիսեան ԶԱԽԻ անդամներին:

Ս.Մամիկոնեանը նշեց ԱՄՆԻ, Բրիտանիայի եւ Ֆրանսիայի հիւպատոսների շահագրգռուածութիւնը եւ Արեւմտահայ Ազգային խորհրդի ձգտումը համագործակցել այս տէրութիւնների դիւանագետների հետ³⁸: Ըստ նրա՝ ռուս-գերմանական անջատ հաշտութիւնից յետոյ քիչ հաւանական էր Արեւմտեան Հայաստանում հսկողութիւն պահպանել, քանի որ հակառակորդը իսկոյն կը յարձակուէր: Միքանի ելոյթից յետոյ Անդրանիկն արձագանքեց իրեն հակասողներին՝ պաշտպանութեան խնդրում անգործունէյա լինելու մեղադրանքով եւ տեղեկացրեց, որ վաղն իսկ գնալու է Էրզրում եւ հրաժարուում է իրեն տրուած պաշտօնից:

Շարունակելով նույն քննարկումը՝ Խ.Կարճիկեանը յոյս յայտնեց,

թէ իրական դրութիւնն ու շրջաններուն հաստատուած հսկողութիւնը անպայման ազդելու էին ապագայ պայմանագրերի բովանդակութեան վրայ: Ինքը խօսեց ՅԱԽԻ գինուժի թոյլ լինելու մասին եւ առաջարկեց չխոչընդոտել արեւմտահայերի ջանքերին: Պարզապէս անհնարին է բանակցել, երբ թշնամուն չես դիմադրում //-284 եւ թուրք զաւթիչներին ես յանձնում ազատագրուած տարածքները³⁹: Յ.Զաւրեանը նոյնպէս քննադատեց ՅԱԽԻն ու մերժեց իբր սխալ արտաքին քաղաքականութիւն վարելու նրան ներկայացուած մեղադրանքը: Նա յիշեցրեց՝ ոչ թէ հայերը, այլ Կովկասեան բանակի հրամանատարութիւնն էր նախաձեռնել թիֆլիսեան բանակցութիւնները ամերիկացիների եւ ֆրանսիացիների հետ, ինչպէս նաեւ բրիտանացիների հետ հանդիպումները Պարսկաստանում: Մասնաւորապէս, կոմիսարութիւնը եւ նրա պետը, զօրավար-լէյտենանտ Պ.Աւերեանովը ստացել էին Դաշնակիցների համաձայնութիւնը 20 միլիոն ռուբլի վարկ տալ՝ Հայաստանը պաշտպանելու նպատակով: Ընդ որում, նրան հետեւեց եւ փող հայցեց նաեւ Անդրկովկասեան կոմիսարիատը⁴⁰:

Լրացուցիչ վէճերից յետոյ որոշուեց կազմակերպել Հայաստանի երկրապահ Զօրամասը: Երկու Խորհուրդներն ստեղծեցին եռանդամ մի մարմին, որ գործելու էր Գլխաւոր-կոմիսարութեան կից: Զօրամասն յանձնուում էր Հայկական Զօրաբանակին: Այդ երկրապահ զինուժի հրամանատարին ընտրելու համար ստեղծուել էր հաւասարութեան հիմունքով ձեւաւորուած 12-հոգանոց կոմիտէ: Ի վերջոյ, երկու թեկնածուներից՝ Մ.Սիլիկեանից եւ Անդրանիկից, Անդրանիկը հաւաքեց 9 ձայն⁴¹:

Ամերիկեան դիրքորոշման յստակեցումն ու մեկուսացումը 1918 սկզբին

Անդրանիկ Օզանեանին ընտրութիւնների յաջորդ իսկ օրը, ընդհանուր պատկերացում կազմելով Մերձաւոր Արեւելքում ԱՄՆի հեռանկարի մասին, Ռ.Լանսինգը 1918 Յունուարի 3ին պատասխանեց պարսկական դեսպանորդին, որ Թեհրանի ներկայացված հայցը՝ դուրս հանել իր երկրից բոլոր մարտնչող բանակները, ուշագրաւ է եւ արժանի ջերմ կարեկցանքի: Այնուամենայնիւ, այդ դիմումը լրացուցիչ հետազօտման կարիք ունի⁴²: Որպէս հետեւանք՝ 1918 Յունուարի 21ին Ուաշինգտոնում ստացան Պարսկաստանի կառավարութեան պաշտօնական բողոքը՝ ինչպէս ամերիկացիների եւ Անտանտի համատեղ ճիգերով հայկական եւ ասորի զօրամիաւորումների հանդերձման, այնպէս էլ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի սպաների //-285 ղեկավարութեամբ Ուրմիայի շրջանում նրանց վարժեցնելու վերաբերեալ⁴³: Մ. Նահանգների պաշտօնեաները խորհրդակցութիւն սկսեցին Բրիտանիայի իրենց ընկերակիցների հետ, քանի որ չէին ցանկանում խափանել Թեհրանի հետ հնարաւոր մերձեցումը կամ նպաստել Իրանում գերմանա-թուրքական ազդեցութեան աճին: Հետեւաբար Ուաշինգտոնը եռանդագին հերքում էր Ուրմիայի շրջանում զինուժի վարժեցման գործում դրամական որեւէ յատկացումով իր մասնակցութիւնը⁴⁴:

1918 Յունուարի 24ին Լոնդոնի ԱՄՆ դեսպանին առաջարկեցին ամերիկացի սպաներ ուղարկել պարսկական բանակ, ինչպես եւ ամեն հնարաւոր ձեւերով մասնակցել եւրոպական ծրագրերին⁴⁵: Այնուհետեւ, Փետրուարի 1ին Թաւրիզում ԱՄՆի հիւպատոսից մի ուշագրաւ զեկուցագիր հասաւ Պետքարտուղարութիւն: Նրանում նշուում էր, որ Թաւրիզում եւ Ուրմիայում ծաւալուած ռազմական շինարարութիւնը նախածեռնել էին նոյն վայրում հաստատված Անտանտի հիւպատոսները: Նրանք պաշտօնապէս ֆինանսաւորում եւ աջակցում էին հայերին, ասորիներին եւ այլ կամաւորականներին զինվորական ստորաբաժանումներում հաւաքագրումը, զինումն ու վարժեցումը՝ անգլիացի սպաների նրամանատարութեան ներքո: Նոր զինուժը պաշտպանում էր տեղական բնակչութեանը եւ տեղեկանալով Թիֆլիսից բխող ազդակների մասին՝ ձգտում էր նեցուկ լինել կովկասեան մտայղացումներին: Սակայն Թաւրիզի զօրավար-նահանգապետը կտրականապէս դէմ էր զինուորներին վարժեցնելուն, իսկ հիւպատոսներին սպառնում էին սպանութեամբ⁴⁶:

Մեր տրամադրության տակ առկայ աղբիւրագիտական տուեալները հնարաւորութիւն չեն տալիս միանշանակ պնդելու, թէ ներկայացուած բողոքները արտայայտում էին բացառապէս Թեհրանի կենտրոնական կառավարութեան վերաբերմունքը կամ արդիւնք էին թուրք գերմանական ազդեցութեան: Այդուհանդերձ, դրանք անկասկած թուլացնում էին Անտանտի արեւելեան դիրքերը: Ուստի, Լոնդոնից առաջարկեցին սատարել պարսկական անկախութեանը եւ նրա օգտին եռակողմ յայտարարութիւն անել: Փետրուարի 14ին Ուաշինգտոնը պատասխանեց, թէ «Պարսկաստանի հարցում Մեծ Բրիտանիայի եւ Մ. Նահանգների զբաղեցրած դիրքերը միմեանցից շատ են տարբերում»⁴⁷, հետեւաբար, «տուեալ պահին, [նրանց համատեղ //-286 յայտարարութիւնը] չի կարող ամենախելացի արարք համարուել»⁴⁸: ԱՄՆը գերադասեց չպարզաբանել սեփական մտադրութիւնները, չմիանալ իր խաղակիցներին ու որեւէ պարտականութիւն չստանձնել, պահպանելով քաղաքական գործունէութեան լիակատար ազատութիւնը:

Փետրուարի 15ին Պետքարտուղարութիւնում Թիֆլիսից զեկուցագիր ստացան, թէ՛ Կովկասեան Ռազմաճակատի գլխաւոր հրամանատար Եւզենի Վ.Լեբեդիսկին եւ Անդրկովկասեան Կոմիսարիատը բողոք են ներկայացրել թուրք-պարսկական սահմանը Դաշնակից զինուժի եւ մասնաւոր անձանց առջեւ փակելու համար⁴⁹: Նրանք առաջարկեցին հիւպատոս Ֆ.Սմիթին միանալ իրենց դիմումին, քանի որ սահմանի փակումն արգելում էր Արեւմտեան Հայաստանում գործող ստորաբաժանումների ուժեղացում եւ անհնարին էր դարձնում այդ գծի պաշտպանութիւնը ռուսական կամ հայ-ասորական ջոկատներով: Այս ստորաբաժանումների չեզոքացումն եւ արեւմտահայ նահանգներից կտրելու հանգամանքը թուլացնում էր նաեւ բրիտանացիների դիրքերը Բաղդադում: Ի պատասխան՝ Ֆ.Սմիթը նրանց խորհուրդ տուեց խոստանալ

պարսիկ կառավարութեանը՝ կարգաւորել ռուսական կողմի հետ ունեցած ֆինանսական եւ մաքսային հարցերը: Նա յիշեցրեց որ 1918 Փետրուարի 10ին (Յունուարի 28ին) Բրեստում արտասանուած «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն» չարաբաստիկ յայտարարութիւնը եւ միեւնոյն ժամանակ բոլշեւիկների հրամանը՝ բանակը ցրելու եւ պատերազմը դադարեցնելու մասին, խիստ բացասական ազդեցութիւն են գործելու Կովկասեան Ռազմաճակատի ընդհանուր իրադրութեան վրայ⁵⁰:

Նոր տոմարով Փետրուարի 18ին, Թեհրանում ԱՄՆ դեսպանորդը Ե. Լեբեդինսկուց ստացաւ նոյնաբնոյթ միջնորդագիր: Պետական պաշտօնեաների հետ աշխատանքային զրոյցում պարցուեց, որ սահմանը փակուել է բոլոր զինծառայողների, ինչպէս նաեւ Կովկասում հաւաքագրուած հայերի առջեւ: Իր հերթին, դեսպանորդը պահանջեց կառավարական միջոցառումներ կատարել՝ հնարաւորինս ապահովելու երկրում բնակութիւն հաստատած ամերիկացիների եւ այլ քրիստոնեաների կեանքի եւ սեփականութեան անվտանգութիւնը⁵¹: Պետքարտուղարութիւնը մտահոգուած էր տեղում //-287 գերմանաթուրքական ազդեցութեամբ եւ փորձում էր հասկանալ, թե կարելի՞ էր արդեօք հաւատալ պարսիկների խոստումներին ու դիմումներին:

1918 Մարտի 14ին, Ուաշինգտոն տեղեկացան բրիտանացիների՝ Թեհրանում ներկայացրած հայտի բովանդակութեան մասին, որով պարզուում էր թէ Լոնդոնում վճռական էին պաշտպանելու Անտանտի տէրութիւնների հաւաքական շահերը: Բրիտանական այս ուղերձը պարսկական դահլիճին նշում էր, որ Բրիտանիան նոր զօրքեր է տեղադրելու երկրի հիւսիս-արեւմտեան, այսինքն՝ Յայաստանին սահմանակից մասում: Դրա փոխարէն Լոնդոնը ապահովում էր պատերազմից յետոյ գումարվելիք համագումարում Պարսկաստանի լիիրաւ տեղը, պայմանով, որ դրան հաւասարապէս հրաւիրելու էին այլ՝ մարտերին չմասնակցած պետութիւնների եւս: Բրիտանացիները վճռական էին պահել իրենց ենթակայ հարաւպարսկական հրաձիգներին պատերազմից յետոյ եւս, սակայն այդ զինուորների՝ յետագայ խաղաղ պայմաններում օտար սպաներին ստորադասութիւնը, պէտք էր կարգաւորել առանձին մի համաձայնագրով⁵²:

Մարտի 21ին, լուսաբանութեան համար, Պետքարտուղարութիւնը մի շարք հարցեր յղեց Թեհրանում գործող իրենց դեսպանորդին, թե.-

ա) հնարաւո՞ր էր արդեօք բրիտանական զօրքերի մուտքը Կովկաս:

բ) արդեօ՞ք նրանք պատրաստ էին պաշտպանելու հայերի եւ քրիստոնեայ ասորիների կեանքը:

գ) ո՞րն է այդ բանակի նպատակը Ադրբեջանում եւ ամբողջ Կովկասում:

դ) արդեօ՞ք բրիտանական զինուորների ժամանումը թելադրուած է անհրաժեշտութեամբ, եւ ի՞նչ են անելու այդ ուժերը, եթէ պարսկական

կողմը միանայ գերմանա-թուրքական դաշինքին:

ե) ի՞նչ դիրքորոշում ունեն Ռեշտում գտնուող բուլշեիկները, արդեօ՞ք նրանք դիմադրելու են բրիտանացիներին. հայերին ինչպե՞ս են վերաբերում⁵³:

Չեռագիրը ուղարկելու յաջորդ իսկ օրը, Ռ.Լանսինգը Կոնգրեսի՝ իրադրութեանը վերաբերող հարցումին ի պատասխան //-288 յայտարարեց, թե չի կարող Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպաններին սեփական կարծիք յայտնել 1915-1916ի գաղտնի համաձայնագրերի վերաբերեալ: Նա գերադասում էր նաեւ այդ փաստաթղթերի մասին հարցեր չտալ եւրոպացի նշեալ դիւանագետներին:

Այնինչ նրա ելոյթի պահին Անտանտի ներկայացուցիչ-սպաները Ուրմիայի նահանգում զինել, վարժեցրել ու իրենց հրամանատարութեան տակ էին պահում 5-7,000 հայ եւ ասորի ռազմիկների: Բաղդադից եկած բրիտանական ստորաբաժանումները տեղաւորուեցին Քերմանշահում, Չամադանում եւ անընդհատ համալրում էին: Նրանց հրամանատարները բացատրում էին աներիկացիներին, որ չեն պատրաստուում գրաւել Կովկասի նաւթաբեր հորերը, սակայն լուրջ մտահոգուած են Պարսկաստանում հայերի անվտանգութեան հարցով: Թաւրիզի ԱՄՆ հիւպատոսը չէր հաւատում Պարսկաստանի՝ Ուաշինգտոնի նկատմամբ տածած քաղաքական թշնամանքին, բայց միաժամանակ կարծում էր, որ տեղի հայ բնակչութիւնը լուրջ վտանգի մէջ էր⁵⁴:

Մինչեւ Ապրիլի սկիզբ Մ. Նահանգները վերջնականապէս չէր հրաժարուում արեւմտահայ զօրամասի հանդերձաւորումից, սակայն 1918 Ապրիլի 3ին Ռ.Լանսինգը յիշեցրեց գործընկերներին, թէ՛ իր երկիրը Թուրքիային պատերազմ չի յայտարարել եւ, հետեւաբար, իր կառավարութիւնը չի կարող բանակաշինութեան նպատակով դրամական միջոցներ յատկացնել⁵⁵: Եւ եթէ նախկինում աներիկեան դանդաղ-կոտորթիւնը կարելի էր որակել որպէս Բրիտանիային ձեռնտու ու նրա հետ համաձայնեցուած ձգձգումներ միայն, ապա պարսկական կառավարութեան վարքագիծը տարածաշրջանում առաջացրեց շահերի բախում ԱՄՆի եւ Դաշնակիցների միջեւ: Ուաշինգտոնը դրամ չյատկացրեց հայերի զինման աշխատանքի համար: ԱՄՆի բարձր իշխանութիւնը գերադասեց չթշնամանալ Թուրքիայի հետ, չդժուարացնել նրա արշաւանքը դէպի Բաքու եւ սահմանափակուել եւրոպայում ծաւալուած իր բանակի գործողութիւններով եւ մարդասիրական օգնութեամբ՝ ի նպաստ Մերձաւոր Արեւելքում եւ Անդրկովկասում, յատկապէս սեփական ոստանում իրենց իսկ կեանքի համար մարտնչող հայերի: //-289

Եզրակացութիւն

1917-1918ի իրադարձութիւնները վկայում են, որ.

ա) ԱՄՆի ռազմավարութիւնը տարբերում էր Անտանտի Տէրութիւնների ընթացքից ու նպատակներից: Ու թէեւ քարոզիչներն ու հիւպատոսները հիմք էին ընդունում իրենց երկրի նախագահի՝ Արեւմտեան Չայաստանին վերաբերող պաշտօնական յայտարարութիւնները, ԱՄՆի

քաղաքական վերնախաւը գերադասում էր հակասութեան մէջ չմտնել եւրոպացի դաշնակիցների եւ Ռուսաստանի հետ:

բ) Հայ ժողովրդի համար ինքնապաշտպանութիւնը պարտադիր գրաւական էր՝ խաղաղ գոյակցութիւն ապահովելու խնդրում: Զիջողական պահուածքը ընդունելի էր միջազգային համաձայնագրեր կնքելուց յետոյ միայն, եւ միանգամայն անօգուտ էր որպէս դիւանագիտական միջոց: Հայութեան՝ ծայր աստիճանի բարդ ու ծանր իրավիճակը, հասարակութեանը թելադրում էր գործել ինքնուրոյն, որպէս առաւելագոյնս կազմակերպուած ու քաղաքական առումով լիիրաւ հասարակութիւն:

[Ամփոփագիր*]

1917-1918թթ. ԱՄՆ միջամտել էր Հայ դատի քաղաքական զարգացումներին որպէս Առաջին աշխարհամարտի կռվող կողմ: Արյունաքան եւ ավեր Արեւմտեան Հայաստանը՝ դառնալով յեղափոխութեամբ համակված Ռուսաստանի եւ անգլո-ֆրանսիական դաշինքի՝ գերմանութւրքական միութեան դէմ թե՛ ռազմական բախման ասպարեզ, պահանջում էր զանգւածային պաշտպանութիւն: Հայ ժողովուրդն ու նրա դեռեւս չձեւավորված ազգային պետութիւն՝ ի դէմս Հայոց Ազգային եւ Արեւմտահայ Ազգային Խորհուրդների, դժւարին քայլեր էին անում Ազգային զօրաբանակն ու արեւմտահայ դիւիզիան կազմելու ուղղութեամբ:

Անրապնդւելով մեծ տարածաշրջանում, ԱՄՆ չէր ենթարկում իր նպատակներն ու վարքագիծը Մեծ Բրիտանիայի շահերին: Մ. Նահանգներ՝ որպէս այլընտրանք, իրենց ձգեցին Պարկաստանի համակրանքն, եւ ջանք էին թափում չփչացնել Թուրքիայի հետ պաշտօնապէս թշնամական իսկ իրականում բարիդրացիական հարաբերութիւնները: Միեւնոյն ժամանակ Ուաշինգտոնում չէն համարձակվել ամբողջապէս փոխարինել Ռուսաստանին, ակնկալելով դրա վերականգնում ու Բրիտանիայի հետ հնարավոր համագործակցութիւն:

Ինչ վերաբերում է հայ իշխանութեան մարմիններին, ապա դրանք ի զուր էին հոյսեր կապում, թէ Օսմանեան Թուրքիան հարգելու էր Ռուսաստանի հետ կնքուած Բրեստի պայմանագիրն ու պիտի բաւարարվէր նրա ձեռքբերումներով: Իրականում այն պարապութեան մատնեց հայերին ու միայն նվազեցրեց նրանց դիմադրողութիւնը: Մինչդէռ պատերազմական խոր ճգնաժամի պայմաններում հարկավոր են ինքնուրոյնութիւն ու բանակի եւ պետութեան կազմակերպում, քանի որ դիմադրողութիւնն ու սեփական շահեր ներկայացնելու ունակութիւնը պարտադիր պայման են խաղաղութիւն ապահովելու եւ հարեւանների հետ կապուած համաձայնագրեր կենսագործելու համար:]

Ծանոթագրություններ

1. H.A.Gibbons, Armenia in the World War, NY, American Committee opposed to the Lausanne Treaty, 1926, էջ13:

2. Papers Relating to the Foreign Relations of the United States, 1917, Suppl.2 The World War, in 2 vols., vol. I. Wash., GPO, 1932, էջ 16-17, 120 (Paper Relating):

3. United States National Archives, Washington D.C., Record Group 59 General Records of the Department of State, class 763.72119/document 549 (այսուհետեւ՝ US NA):

4. Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, էջ 73:

5. Այժմ՝ Թբիլիսի:

6. Ա.Մարմարեան, Ջօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ.Պոլիս, Կիւթնպերկ, 1920, էջ 263-264; նաեւ՝ Ա.Ս.Նազարյան, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թովականներ), Երևան, Ջանգալ-97, 1999, էջ 116-117; նաեւ՝ Հ.Այվազյան, Ջորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Երևան, Հայկական հանրագիտարանի հրատ., 2004, էջ 76; նաեւ՝ Գ.Կարինյան, Ազգային հերոս Ջօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Փարիզ, Յ.Թիւրապեան, 1953, էջ 171-173:

7. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), Երևան, ֆ.222, ց.1, գ.141, թ.51:

8. Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, էջ 73:

9. Ա.Մարմարեան, էջ 285-288:

10. Ա.Միհրանեան, Ինչպե՞ս պէտք է գրաւել Թրքահայաստանը (Ջօր. Անդրանիկի կարծիքը), Կ.Պոլիս, տպ.Ս.Տէր Սահակեան, 1921, էջ 7: //-290

11. А.О.Арутюнян, Кавказский фронт в 1914-1917 гг. (Կովկասեան ռազմաճակատը 1914-1917ին), Ереван, А́вастан, 1971, էջ 271-274:

12. Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, էջ 791:

13. US NA, RG 59, 701.67m51/2/Encl.: Մերթդուրդիական առումով այդ խոստումը բաւական խոցելի էր. շատ աւելի յարմար է սեփական երկիրը դիտարկել որպէս կապող օղակ ու համաշխարհային առեւտրի եւ այլ տեսակի համագործակցութեան տարածք:

14. US NA, RG 59, 763.72/6168:

15. Ջօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-1917, Օրագրուած Ջօրավարին թիկնապահ զինուորէն, Պոսթոն, Պայքար, 1924, էջ 62-63; նաեւ՝ Գ.Կարինյան, էջ 173-174; նաեւ՝ Ա.Ս.Նազարյան, էջ 176:

16. US NA, RG 59, 763.72119/750:

17. Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol. I, էջ 270:

18. Նոյն, էջ 795-796:

19. Նոյն:

20. Նոյն, էջ 295:

21. Նոյն, էջ 304:

22. US NA, RG 59, 761.00/11a:

23. ՅԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.20 շրջ.:
24. Նոյն, ք.20-21:
25. Նոյն, ք.35 շրջ.-36:
26. Նոյն, ք.51-51 շրջ.:
27. Նոյն, ք.52 շրջ.:
28. Papers Relating, 1918, Suppl.I The World War, in 2 vols., vol.I. Wash., GPO, 1933, էջ 895-897:
29. Նոյն, էջ 908-910, 912:
30. US NA, RG 59, 763.72119/1708; Papers Relating, 1917, Suppl.2 The World War, vol.I, էջ 493-497, 499, 502:
31. ՅԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.78 շրջ., 79 շրջ.:
32. Նոյն, ք.80-80 շրջ.:
33. Նոյն, ք.82-82 շրջ.:
34. Գալուստ Ա.Գալոյան, Հայաստանը և Մեծ Տերությունները 1917-1923թթ., Երևան, Գիտություն, 1999, էջ 20:
35. ՅԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.91:
36. Նոյն, ք.93 շրջ.-95:
37. Նոյն, ք.99:
38. Նոյն, ք.100 շրջ.:
39. Նոյն, ք.102:
40. Նոյն, ք.102 շրջ.:
41. Նոյն, ք.103 շրջ.:
42. US NA, RG 59, 763.72119/2618:
43. Նոյն, 763.72111/6862:
44. Նոյն:
45. Նոյն, 763.72/8632: //-291
46. Papers Relating, 1918, Suppl.I The World War, vol.I, էջ 899: Նաեւ՝ ՅԱԱ, ֆ.200, ց.1, գ.17, ք.3-3 շրջ., 6:
47. US NA, RG 59, 763.72/8741:
48. Նոյն, նաեւ՝ Papers Relating, 1918, Suppl.1 The World War, vol.I, էջ 81, 125:
49. Կովկասում պարսկական զլխաւոր հիւպատոսի ՀԱԽԻՆ ուղարկուած նամակը՝ սահմաններ փակելու մասին՝ ՅԱԱ, ֆ.200, ց.1, գ.17, ք. 2, նաեւ՝ ք.4-4 շրջ.:
50. US NA, RG 59, 763.72/8867:
51. Նոյն, 763.72/8900:
52. Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol.I, էջ 904:
53. US NA, RG 59, 763.72111/6905:
54. Papers Relating, 1918, Suppl.I The World War, vol.I, էջ 904-905:
55. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. (Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917-1920թթ. փաստաթղթերում), կազմ. եւ անգլերէնից թարգմ. Գ.Գ. Մախնուրյան, Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 2012, էջ

24, 22: //-292

* Հանդեսուն հրապարակված հոդվածուն չի ընդգրկուել:

©

17 էջ

«Հայկազեան Հայագիտական Հանդես»: Պէյրուք, 2015, հատ.35, էջ
273-292: